

ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ TAVUSH MARZ



Մարզկենտրոնը՝
p. Իջևան **Marz centre**
Ijevan town

Տարածաշրջանները՝
Իջևան
Դիլիջան
Նոյեմբերյան
Տաուշ **Territories**
Ijevan
Dilijan
Noyemberyan
Taush

Քաղաքները՝
Իջևան
Դիլիջան
Բերդ
Նոյեմբերյան
Այրում **Towns**
Ijevan
Dilijan
Berd
Noyemberyan
Ayrum

Տարածքը Territory	2 704 քառ.կմ/ sq. km
Հայաստանի Հանրապետության տարածքում մարզի տարածքի տեսակարար կշիռը, % Territory share of the marz in the territory of the Republic of Armenia, %	9.1
Համայնքներ, 2019 թ. տարեկգրի դրությամբ Communities, as of the beginning of 2019	24
Քաղաքներ Towns	5
Գյուղեր Villages	61
Բնակչության թվաքանակը 2019թ. տարեկգրի դրությամբ Population number as of the beginning of the year, 2019	122.2 հազ.մարդ/ ths. person
այդ թվում՝ of which:	
քաղաքային urban	51.7 հազ.մարդ/ ths. person
գյուղական rural	70.5 հազ.մարդ/ ths. person
Հայաստանի Հանրապետության բնակչության ընդհանուր թվաքանակում մարզի բնակչության թվաքանակի տեսակարար կշիռը 2018թ., % Share of marz population in the total population of the Republic of Armenia 2018, %	4.1
Քաղաքային բնակչության թվաքանակի տեսակարար կշիռը 2018թ., % Share of urban population size 2018, %	42.3
Գյուղատնտեսական նշանակության հողեր Agricultural land	110 745.8 հա/ ha
այդ թվում՝ վարելահողեր of which: arable land	25 580.0 հա/ ha

Տավուշի մարզը գտնվում է Հայաստանի Հանրապետության տարածքի հյուսիս-արևելյան հատվածում: Մարզը հարավ-արևելքում և հարավում սահմանակից է Գեղարքունիքի և Կոտայքի մարզերին, արևմուտքում՝ Լոռու մարզին և պետական սահմանով՝ Վրաստանին, հյուսիսում և արևելքում՝ Ադրբեջանին:

Մարզի կենտրոնով դեպի հյուսիս-արևելք հոսում է Աղստև գետը: Ծովի մակարդակին ամենամոտ կետը (Հայաստանի Հանրապետության ռելիեֆի ամենացածր կետը) գտնվում է Դեբեդավան գյուղի մոտ՝ 390 մ, ամենաբարձր կետը Միափորի լեռնաշղթայի Մուրղուզ լեռն է՝ 2 993 մ:

Տավուշի մարզը տարածվում է Փոքր Կովկասի լեռնաշղթաների արտաքին շարի վրա (Վիրահայոց, Գուգարաց և Միափորի լեռներ): Գտնվում է Հայաստանի Հանրապետության չափավոր խոնավ տարածաշրջանում: Արևափայլքի տարեկան տևողությունը 1 900 -2 100 ժամ է, անարև օրերի թիվը՝ 65: Ամառները լինում են տաք, ձմեռները՝ մեղմ: Գետերը պատկանում են Կասպից ծովի (Կուր գետի) ավազանին և սնվում են հալոցքային, ստորերկրյա և անձրևային ջրերից: Բնական լիճը՝ Դիլիջանի մոտ գտնվող Պարզ լիճն է: Այստեղ են գտնվում Ջողազի, Հախումի, Տավուշի, Այգեձորի և Իջևանի արհեստական ջրամբարները:

Մարզի ընդհանուր մակերեսի 40.3%-ը զբաղեցնում են խառն անտառները, որոնք աչքի են ընկնում բուսական և կենդանական աշխարհի բազմազանությամբ: Բնության նախաստեղծ վիճակի պահպանության, առավել հարստացման և տեղական պայմաններում նոր տեսակների ստացման նպատակով Աղստևի ավազանում ստեղծված են Դիլիջանի պետական արգելոցը և Իջևանի անտառային այգին: Մարզի և հատկապես Աղստևի հովտի բնակլիմայական պայմանները (մեղմ կլիմա, թթվածնով հարուստ լեռնային մաքուր օդ, հանքային բուժիչ ջրեր, անտառներ, դեղաբույսերով հարուստ լեռնաշխարհ) չափազանց նպաստավոր են բնակչության հանգստի կազմակերպման, առողջության վերականգնման և միջազգային տուրիզմի զարգացման համար:

Իջևան քաղաքից 7 կմ հեռավորության վրա գտնվող Ենոքավան գյուղի վարչական տարածքի (ծովի մակերևույթից 1 370 մ բարձրությամբ) 7 հա տարածության վրա գործում է Հայաստանում նախադեպը չունեցող էքսթրիմի և զվարճանքների պարկը, որտեղ տարեցտարի ավելանում են ակտիվ հանգստի տեսակները, ինչպես նաև ջրային սպորտաձևերը: Այցելուների թվաքանակի աճը վկայում է, որ այն ուշագրավ է դարձել նաև արտերկրից ժամանող զբոսաշրջիկների համար և կյաթանի էկոտուրիզմի զարգացումը երկրում:

Մարզը համեմատաբար աղքատ է օգտակար հանածոներով: Արդյունաբերական նշանակություն ունեն բենտոնիտային կավը, կրաքարերը, վիմագրական քարը, դոլոմիտը, ֆելզիտը: Աղստև գետի հովիտը հարուստ է հանքային ջրերով, որտեղ կազմակերպված է դրանց արտադրությունը:

Մարզի կենտրոնով է անցնում Հյուսիսային Կովկաս-Թբիլիսի-Երևան գազատարը: Մարզով ձգվում են 146 կմ միջպետական, 253 կմ

Tavush marz is situated in the north-eastern part of the Republic of Armenia. In the South-East and South the marz borders with Gegharqunik and Kotayk marzes, in the West it borders with Lori marz and Georgia, in the North and East – Azerbaijan.

Aghstev river flows to the south-east through the marz centre. The nearest point to the sea level (the highest point of the Republic of Armenia relief) is situated near the Debedavan village (390m), the highest point - Murghuz mountain (2 993 m) of Miapori mountain range.

Tavush marz is extended on the external line of Small Caucasus mountain ranges (Virahayots, Gugarats and Miapor mountains) and is situated in the moderate damp region of the Republic of Armenia. Annual duration of the sun radiance is 1 900-2 100 hours, the days of the not sunny 65. Summers are warm, winters - mild. Rivers belong to the Caspian sea (Kur river) basin and live on thawed, underground, rainy waters. The natural lake is Parz lake that is situated near the Dilijan. Joghaz, Hakhum, Tavush, Aygedzor and Ijevan reservoirs were situated here too.

The marz nature is wonderful. Mixed forests comprise 40.3% of total surface that are striking by variety of fauna and flora, incomparable monuments of natural inheritance. Dilijan state preservation and Ijevan forest garden have been created in the Aghstev basin with a purpose of keeping the situation created by nature, more enrichment and receiving new kinds in local conditions. Climatic conditions (mild climate, mountainous clear air rich with oxygen, mineral medicinal waters, forests, mountainous land rich with herbs) of marz and, in particular, Aghstev valley are extremely favourable for the organization of population rest, recovery of health and promotion of international tourism.

7 km away from the administrative territory of Yenokavan village, 7 km away from the town of Ijevan, on the territory of 7 hectares (1370m above sea level) operates the unprecedented extreme and amusement park in Armenia, where every year the park is experiencing an increasing number of extreme activities, as well as water sports. The increase of the visitors number indicates that it has become more attractive for foreign tourists and will promote the development of ecotourism in the country.

The marz is comparatively poor with useful minerals. Bentonite clay, limestone, lithographic stone, dolomite, felsites are of marz importance. Aghstev river valley is rich with mineral waters that are bottle filled as well.

The Northern Caucasus-Tbilisi-Yerevan gas-bearer goes through the marz centre. 146 km interstate, 253 km of republican importance roads are extended through the

հանրապետական նշանակության ճանապարհներ: Աղստևի ձորով է անցնում Իջևան-Հրազդան երկաթուղու 70 կմ-ոց հատվածը (ներկայում չի գործում): Հյուսիսային սահմանի երկայնքով, Դեբեդի ավով անցնում է Երևան-Թբիլիսի երկաթուղու 7 կմ-ոց հատվածը:

Մարզի 47 բնակավայրեր սահմանամերձ են Ադրբեջանին և ունեն ռազմավարական կարևոր նշանակություն՝ մշտապես կրելով պատերազմական իրադարձությունների հետևանքներ: Դրանով է պայմանավորված նաև այդ բնակավայրերի քիչ բնակեցվածությունն ու տնտեսապես թույլ զարգացվածությունը:

2018թ.-ին Տավուշի մարզի տնտեսության հիմնական հատվածների տեսակարար կշիռները Հայաստանի Հանրապետության համապատասխան ոլորտների ընդհանուր ծավալում կազմել են.

- արդյունաբերություն՝ 1.5 %,
- գյուղատնտեսություն՝ 4.4 %,
- շինարարություն՝ 3.4 %,
- մանրածախ առևտուր՝ 2.4 %,
- ծառայություններ՝ 0.9 %:

Մարզը հանրապետության վաղ արտահայտված գյուղատնտեսական շրջաններից է: Անասնաբուծության մեջ առաջատար ճյուղեր են համարվում խոշոր եղջերավոր անասնաբուծությունն ու խոզաբուծությունը, իսկ բուսաբուծության մեջ՝ հացահատիկային մշակաբույսերի մշակությունն ու խաղողագործությունը: Վերջին տարիներին իրագործված բազմաթիվ խթանող գյուղատնտեսական ծրագրերի շնորհիվ մեծ զարգացում է ապրում պտղաբուծությունը, ինչով մարզը նախկինում մեծ համբավ է վայելել: Տարեցտարի զարգացում է ապրում նաև մեղվաբուծությունը:

Մարզի տնտեսության առաջատար ճյուղը մշակող արդյունաբերությունն է: Առավել զերակշռող են սննդի արդյունաբերությունը և փայտամշակումը: Մարզում արտադրվող արդյունաբերական արտադրանքից արտաքին շուկա են հանվում գինիներ, պահածոներ, հանքային ջուր, քարե և փայտե, վերջերս նաև տեքստիլ արտադրատեսակներ:

Բեռնաուղևորափոխադրումները մարզում իրականացվում են ավտոմոբիլային տրանսպորտով:

Մարզկենտրոն Իջևան քաղաքը (2019թ. տարեսկզբին՝ 20.4 հազ. բնակիչ) գտնվում է Երևանից 133 կմ հեռավորության վրա: Մարզի հյուսիսարևելյան հատվածի վարչական, արդյունաբերական, կրթամշակութային կենտրոնն է և տրանսպորտային հանգույցը: Քաղաքի արդյունաբերության հիմնական ուղղությունը մշակող արդյունաբերությունն է (մասնավորապես՝ փայտամշակումը, սննդամթերքի, հանքային ջրի և գինու արտադրությունը): Իջևան քաղաքի գորգերը նախկինում շատ մրցունակ են եղել ներքին և արտաքին շուկաներում, սակայն վերջին տարիներին այդ գործունեությամբ գրեթե չեն զբաղվում:

Դիլիջան քաղաքի (2019թ. տարեսկզբին՝ 17.4 հազ. մարդ) հեռավորությունը Երևանից 99 կմ է: Քաղաքի արդյունաբերության հիմնական ուղղությունը մշակող արդյունաբերությունն է, որի մեջ առանձնանում է սննդամթերքի և խմիչքների արտադրությունը: Լայն ճանաչում է ստացել «Դիլիջան Ֆրոլովա» հանքային ջուրը: 2014թ. սեպտեմբերից գործում է «Դիլիջան ինտերնեյշնլ սքուլ օֆ Արմենիա»

marz. 70 km part of Ijevan-Hrazdan railway goes through the Aghstev gorge (currently does not work). 7 km part of Yerevan-Tbilisi railway goes through the Northern border lengthwise, Debed bank.

47 settlements of the marz are bordered by Azerbaijan and have strategic importance, always bearing consequences of civilian casualties. This is also the case with the low birth rate and economically weak development of these settlements.

In 2018 the share of economy main branches of the Republic of Armenia Tavush marz in total volume of correspondent branches of the republic comprised:

- industry 1.5 %,
- agriculture 4.4 %,
- construction 3.4 %,
- retail trade 2.4 %,
- services 0.9 %.

Marz is pronounced agricultural districts of the republic. In animal husbandry the main branches are cow and pig breeding and in plant growing the most developed branches are grain and grape growing. Programs are implemented for recovering the orchards. During last years beekeeping develops too.

Due to the many promising agricultural projects implemented in recent years, the horticulture has a great development, by which the region has previously enjoyed a great reputation. Beekeeping is also being developed every year.

The leading branch of the economy is the processing industry. The most prevalent are the food industry and woodworking. From the industrial production in the region, wines, preserves, pumps, stone and wood, as well as textile goods are imported from abroad.

Freight and passenger transportations in the marz are implemented by road transport.

RA Tavush marz centre is Ijevan town (as of the beginning of 2019 20.4 ths. people) The distance from Yerevan is 133 km. It is the administrative, industrial, education and cultural centre and transport junction of the whole north-eastern part. The main trend of town industry is manufacturing (particularly, woodworking, production of food, mineral water and wine. Ijevan carpets have been very competitive in the internal and external markets, but in recent years are not involved in these activities.

The distance of Dilijan, (as of the beginning of 2019 17.4 ths. People) resort town from Yerevan is 99 km. The main trend of town industry is manufacturing, in which the food and of drinks production is separated. “Dilijan Frolova” mineral water has received wide recognition. Since September 2014 “Dilijan international school of Armenia” has been opened and since September 2013 Dilijan’s central school, which is part of the Ayb School.

միջազգային դպրոցը, իսկ 2013թ. սեպտեմբերից՝ «Այբ» դպրոցների ընտանիքին պատկանող Դիլիջանի կենտրոնական դպրոցը:

Քաղաքի ճարտարապետական տեսքին առանձնակի վայելչություն է տալիս Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասնաճյուղն իր օժանդակ կառույցներով:

Ներկայում մեծ աշխատանքներ են տարվում բնակչության հանգստի կազմակերպման, առողջության վերականգնման և միջազգային զբոսաշրջության զարգացման ոլորտում քաղաքի երբեմնի ունեցած համբավի վերականգնման ուղղությամբ:

Նոյեմբերյան քաղաքի (2019թ. տարեսկզբին՝ 4.6 հազ. մարդ) հեռավորությունը Երևանից 187 կմ է: Քաղաքի տնտեսական կյանքում էական դեր ունի գյուղատնտեսությունը, որի հիմնական ուղղությունն անասնաբուծությունն ու դաշտավարությունն է: Վերջին տարիներին մեծ զարգացում է ապրում նաև քարի արտադրությունը:

Այրում քաղաքի (2019թ. տարեսկզբին՝ 1.8 հազ. բնակիչ) հեռավորությունը Երևանից 206 կմ է: Այն կալարանամերձ քաղաք է, բնակչության հիմնական զբաղմունքը մանրածախ առևտուրն է:

Վերջին տարիներին Նոյեմբերյանի տարածքում լայն թափով զարգանում է պտղաբուծությունը, հատկապես՝ դեղձի այգիների հիմնումը, ինչը կնպաստի Այրումի պահածոների գործարանի վերագործարկմանը:

Բերդ քաղաքի (2019թ. տարեսկզբին՝ 7.5 հազ. բնակիչ) հեռավորությունը Երևանից 202 կմ է: Քաղաքի տնտեսական կյանքում գերակշռողը բազմաճյուղ գյուղատնտեսությունն է, որի մեջ առանձնանում են խոշոր և մանր եղջերավոր անասնաբուծությունն ու դաշտավարությունը: Քաղաքի տնտեսական զարգացման գործում մեծ նշանակություն ունի վերջերս գործարկված տեքստիլ արտադրության կազմակերպությունը, որը նաև սահմանապահ բնակավայրերի բնակչության զբաղվածության և միգրացիոն արտահոսքի կանխման խնդիրներ է լուծում:

The architectural appearance of the city gives the Central Bank branch its convenience.

At present, great efforts are being made to rehabilitate the city's reputation in the field of recreation, health rehabilitation and international tourism development.

The distance from the city of Noyemberyan (at the beginning of the year 2019 4.6 thousand people) is 187 km from Yerevan. Agriculture plays an essential role in the city's economic life, the main direction of which is cattle breeding and fieldwork.

The distance from Ayrum town (at the beginning of 2019 – 1.8 thousand people) is 206 km from Yerevan. City's main occupation of the population is retail trade.


In the recent years, stone production also has a great impact.

In recent years, Noyemberyan's territory has grown rapidly in the development of horticulture, especially the establishment of peach gardens, which will help re-launch the Ayrum cannery.

The distance of Berd town (as of the beginning of 2019 the population was 7.5 ths. people) from Yerevan is 202 km. The main trend of the town economy life is multibranch agriculture, wich is separated by small cattle husbandry and field-crop cultivation.

The recently launched textile manufacturing has a great importance in the economic development of the city, which also solves the problem of population employment and migration flows in frontier settlements.

**ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ՄՇՏԱԿԱՆ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՍԵՌԱՏԱՐԻՔԱՅԻՆ ԲՈՒՐԳԸ,
2019թ. հունվարի 1-ի դրությամբ
AGE AND SEX PYRAMID OF TAVUSH MARZ DE JURE POPULATION
2019 as of January 1**



**ՄԱՆՐԱԾԱԽ ԱՌԵՎՏՐԻ ՕԲՅԵԿՏՆԵՐ
RETAIL TRADE UNITS**

	Քանակը Number					
	2014	2015	2016	2017	2018	
Մանրածախ առևտրի օբյեկտներ, ընդամենը	1 025	1 145	1 161	1 232	1 297	Retail trade units, total
<i>այդ թվում՝</i>						<i>of which:</i>
խանութներ	698	848	874	985	1 054	shops
կրպակներ	290	252	240	196	189	kiosks
գյուղատնտեսական արտադրանքի շուկաներ	1	1	1	1	1	markets of agricultural produce
սպառողական ապրանքների շուկաներ	1	1	1	1	1	markets of consumer goods
առևտրի այլ օբյեկտներ	35	43	45	49	52	other trade units

ԿՐԹԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ
EDUCATIONAL INSTITUTIONS

	Քանակը Number					
	2014	2015	2016	2017	2018	
Պետական նախադպրոցական	59	59	58	63	64	State pre-school
Ոչ պետական նախադպրոցական	1	-	-	-	-	Non-state pre-school
Պետական հանրակրթական	81	81	81	81	81	State general educational
Ոչ պետական հանրակրթական	1	1	1	1	1	Non-state general educational
Երաժշտական, արվեստի, գեղարվեստի դպրոցներ, մանկապատանեկան ստեղծագործական կենտրոններ	19	19	18	18	17	Musical, art schools, creative centers for children
Պետական նախնական մասնագիտական (արհեստագործական) ուսումնական ¹	3	3	3	3	3	State preliminary vocational educational ¹
Պետական միջին մասնագիտական ուսումնական	6	6	6	6	6	State middle vocational educational
Պետական բարձրագույն ուսումնական հաստատության մասնաճյուղ	2	2	2	2	2	Branch of state higher educational

ՔԱՂԱՔՆԵՐ
TOWNS/CITIES

Անվանումը	Name	Մշտական բնակչության թվաքանակը 2019թ. հունվարի 1-ի դրությամբ, մարդ ² Population de jure number as of January 1, 2019, person ²
Իջևան	Ijevan	20 373
Դիլիջան	Dilijan	17 392
Բերդ	Berd	7 533
Նոյեմբերյան	Noyemberyan	4 584
Այրում	Ayrum	1 849

¹ Ներառյալ այն միջին մասնագիտական ուսումնական հաստատությունները, որոնք իրականացնում են նախնական (արհեստագործական) ծրագիր:

Including those middle vocational educational institutions, which implement preliminary vocational program.

² Հայաստանի Հանրապետության քաղաքների բնակչության թվաքանակը ներկայացված է Հայաստանի Հանրապետության 2011թ. մարդահամարի հիմքով վարվող բնակչության ընթացիկ հաշվառմամբ:

Population of city/towns of the Republic of Armenia are presented according to the current population statistics based on the 2011 Population Census of the Republic of Armenia.

ԳՅՈՒՂԵՐ
VILLAGES

	Անվանումը	Name	Մշտական բնակչության թվաքանակը 2019թ. հունվարի 1-ի դրությամբ, մարդ ¹ Population de jure number as of January 1, 2019, perso ¹
Իջևանի տարածաշրջան Ijevan district			
1	Ազատամուտ	Azatomut	2 778
2	Բարխուդարլու	Barkhudarlu	-
3	Ակնաղբյուր	Aknaghbyur	524
4	Աճարկուտ	Acharkut	169
5	Այգեհովիտ	Aygehovit	3 198
6	Կայան	Kayan	309
7	Աչաջուր	Achajur	4 139
8	Բերքաբեր	Berkaber	357
9	Գանձաքար	Gandzakar	3 475
10	Գետահովիտ	Getahovit	2 034
11	Դիտավան	Ditavan	370
12	Ենոքավան	Enokavan	500
13	Լուսահովիտ	Lusahovit	316
14	Լուսաձոր	Lusadzor	613
15	Խաշթառակ	Khashtarak	1 837
16	Ծաղկավան	Tsaghkavan	529
17	Կիրանց	Kirants	308
18	Սարիգյուղ	Sarigyugh	1 232
19	Սևքար	Sevkar	2 071
20	Վազաշեն	Vazashen	857
Դիլիջանի տարածաշրջան Dilijan district			
1	Աղավնավանք	Aghavnavank	237
2	Գեղատափ	Geghatap	-
3	Գոշ	Gosh	1 094
4	Թեղուտ	Teghut	1 542
5	Խաչարձան	Khachardzan	353
6	Հաղարծին	Haghartsin	3 506
7	Հովք	Hovk	413
8	Ճերմակավան	Tchermakavan	-
Նոյեմբերյանի տարածաշրջան Noyemberian district			
1	Արճիս	Artchis	1 066
2	Բագրատաշեն	Bagratashen	2 841
3	Բաղանիս	Baghanis	850
4	Բարեկամավան	Barekamavan	197

¹ ՀՀ մարզերի գյուղերի այս տվյալների սկզբնաղբյուրը՝ համայնքների կողմից տարեկան կտրվածքով ներկայացվող «Գյուղական բնակչության սեռատարիքային կազմը» վիճակագրական հաշվետվություններն են: Այդ սկզբնաղբյուրներով ՀՀ 955 գյուղական բնակավայրերի մշտական բնակչության թվաքանակների հանրագումարը՝ ամբողջությամբ և ըստ մարզերի, ունի որոշակի շեղում բնակչության ընթացիկ հաշվառման համանուն տվյալներից, որոնք խարսխված են Արդարադատության նախարարության Քաղաքացիական կացության ակտերի գրանցման և Ոստիկանության վարչական ռեգիստրների տվյալների վրա: Ընդ որում, վերջինս վերագնահատված է ՏՏԿԱՀ արդյունքներով ստացված միգրացիայի տվյալներով (շեղումը՝ 01.01.2019թ.-ի դրությամբ ՀՀ մասշտաբով՝ կազմել է +11.6%): Շեղումը հիմնականում պայմանավորված է գյուղերի միջև տվյալ տեղեկատվության գրանցման, փոխանակման, համադրման և անվանական տվյալների մակարդակով ստուգաճշտման համակարգի բացակայությամբ:

The sources of these data on RA villages are statistical annual reporting forms «Age and Sex composition of rural population» provided by the communities. According to this source the total resident population of RA 955 villages, as a whole and by marzes (regions), have some deviation from the same data of current statistics of population, which are based on the administrative registers of the Civil Status of the Ministry of Justice and the Police, while the latter is statistically adjusted by the migration results of ILCS (as of 01.01.2019 the deviation comprised +11.6% for the Republic). The deviation is mainly due to the lack of a system for recording, sharing, comparing and nominal data level calibration of the information given between the villages.

	Անվանումը	Name	Մշտական բնակչության թվաքանակը 2019թ. հունվարի 1-ի դրությամբ, մարդ ¹ Population de jure number as of January 1, 2019, perso ¹
5	Բերդավան	Berdavan	3 213
6	Դեբեդավան	Debedavan	608
7	Դեղձավան	Deghdzavan	291
8	Դովեղ	Dovegh	502
9	Զորական	Zorakan	881
10	Լճկաձոր	Lchkadzor	390
11	Կոթի	Koti	1 977
12	Կողբ	Koghb	4 601
13	Հաղթանակ	Haghtanak	1 226
14	Ոսկեպար	Voskepar	771
15	Ոսկեվան	Voskevan	1 364
16	Պտղավան	Ptghavan	817
17	Ջուջևան	Jujevan	474
Տաուշի տարածաշրջան Taush district			
1	Այգեձոր	Aygedzor	1 810
2	Այգեպար	Aygepar	379
3	Արծվաբերդ	Artsvaberd	2 845
4	Իծաքար	Itsakar	277
5	Ծաղկավան	Tsaghkavan	860
6	Մոսեսգեղ	Mosesgegh	1 554
7	Նավուր	Navur	1 006
8	Ներքին Կարմիր աղբյուր	Nerkin Karmir aghbyur	848
9	Նորաշեն	Norashen	1 532
10	Չինարի	Chinari	903
11	Չինչին	Chinchin	458
12	Չորաթան	Choratan	808
13	Պառավաքար	Paravakar	1 556
14	Վարագավան	Varagavan	551
15	Վերին Կարմիր աղբյուր	Verin Karmir aghbyur	1 567
16	Տավուշ	Tavush	1 491

**ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ՊԱՅՄԱՆԱԿԱՆ 10 000 ԲՆԱԿԻՉ ՈՒՆԵՑՈՂ ՀԱՄԱՅՆՔԻ
ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՄԻ ՇԱՐՔ ԲՆՈՒԹԱԳՐԻՉՆԵՐ, 2018թ.
SOME SOCIAL INDICATORS DISTRICT COMMUNITY WITH
10 000 POPULATION IN RA TAVUSH MARZ, 2018**

	Ընդամենը Total	նրանցից՝ including:		
		կանայք՝ women ¹	տղամարդիկ՝ men ¹	
Բնակչությունը, մարդ	10 000	5 251	4 749	Population, person
Ծնվածներ, մարդ	105	48	57	Births, person
Մահացածներ, մարդ	102	51	51	Deaths, person
Ամուսնություններ	42	X	X	Marriages
Ամուսնալուծություններ	7	X	X	Divorces
Մեկ բնակչի ապահովվածությունն ընդհանուր բնակմակերեսով, քառ.մ	48.3			Total area of housing stock provided per inhabitant, square metre
Կրթության ոլորտ, հաճախումը կրթօջախներ, մարդ՝				Education sphere, attendance to educational institutions, person
նախադպրոցական	276	133	143	pre-school
հանրակրթական	1 381	666	715	general schools
Երաժշտական, արվեստի, գեղարվեստի դպրոցներ, մանկապատանեկան ստեղծագործական կենտրոններ	169	110	59	musical, art schools, creative centers for children
նախնական մասնագիտական (արհեստագործական)	21	4	17	preliminary vocational
միջին մասնագիտական	52	22	30	middle vocational
բարձրագույն մասնագիտական	115	60	55	higher vocational
Առողջապահության ոլորտ՝				Public health sphere
հաճախել են պոլիկլինիկա տարվա ընթացքում (հաճախումների քանակը)	32 311	annual attendance to polyclinic during the year (number of attendances)
Մարզիկներ, մարդ	66	11	55	Athletes, person
Զբաղվածներ, մարդ	2 696	1 229	1 467	Employed, person
նրանցից՝ գիտական հիմնարկներում	-	-	-	including- in Science establishments
նրանցից՝ գիտության դոկտոր	-	-	-	including- doctors of Science
գիտության թեկնածուներ	-	-	-	candidates of Science
ուսուցիչներ	126	109	17	teachers
բժիշկներ	20	physicians
միջին բուժանձնակազմ	43	paramedical personnel
Գործազուրկներ, մարդ	1 172	513	659	Unemployed, person
Սոցիալական ապահովության ոլորտ				Social insurance sphere
ընդամենը կենսաթոշակառուներ, տարեվերջի դրությամբ, մարդ	1 688	1 033	655	total pensioners/ as of the end of the year/ person
աղքատության ընտանեկան նպաստ և միանվագ դրամական օգնություն ստացող ընտանիքներ	414	X	X	families that get poverty family benefit and one-time benefit
Հաճախումների քանակը տարվա ընթացքում				Annual attendance during the year
գրադարան	17 368	library
թատրոն	-	-	-	theatre
համերգ	-	-	-	concert
թանգարան	899	museum
Իրավական ոլորտ				Law sphere
հանցագործության դեպքերի քանակը, տարվա ընթացքում	76	X	X	total crimes, during the year
այդ թվում՝ ոչ մեծ ծանրության	34	X	X	of which - not grave crime
միջին ծանրության	34	X	X	medium crime
ծանր	7	X	X	grave crime
առանձնապես ծանր	0.0	X	X	special grave crime

¹ Ցուցանիշները հաշվարկային են:
The indicators are accountable.